

ԱՆՏՈՆ ՍՈՒԼԹԱՆԻԵՑԻՆ ԵՎ ՆՐԱ ԳՐԱՌՈՒՄՆԵՐԸ ՉԻՆԱՍՏԱՆԻ ՄԱՍԻՆ

Անտոն Սուլթանիեցին գործել է Իրանի Սուլթանի քաղաքում, որը 1313 թվականից մոնղոլների Հուլայյան (իլխանական) պետության մայրաքաղաքն էր: Նա գոմինիկյան ուխտի վանականներից էր և տեղի Հայկական կաթոլիկ Համայնքի վանահայրը:

XIV դ. 30-ական թվականների սկզբին Անտոն Սուլթանիեցին կատարում է իր ճանապարհորդությունը գեպի Չինաստան: Վերադառնալով Սուլթանի, նա գրում է մի աշխատություն՝ «Տեղեկություններ Չինաստանի մեծ խանի պետության մասին՝ կազմված Հովհան 22-րդ պապի կարգազրույցամբ արքեպիսկոպոս Սուլթանիեցու կողմից, լատին լեզվով» (“Notitia regiminis magni Caan Cathai Tartarorum imperatoris cum descriptione vastissima ejus regni jussu Joannis XXII ab archiepiscopo Soltaniensi latine scripta”): Այդ աշխատությունը ֆրանսերեն է թարգմանվել 1351 թ. և հրատարակվել 1529 թ.²:

Անտոն Սուլթանիեցու մասին մի քանի ավելի էական փաստեր է բերում Նիկոլայ Միխեևիչ Սպաֆարին: Նա գրում է. «Միայն չինական երկրում՝ ինքեանգ անվանյալ, շատ ավելի մետաքս է արդյունվում, քան ամբողջ աշխարհում, քանի որ որդերը տարենը երկու անգամ են մետաքս ծնում: Իսկ Հին գրքերում գրում են, որ արդեն 1500 տարի է, որ այդ երկրում սկսել են արդյունագործել այն և այն էլ ճիշտ է, թե իսկական մետաքսի արդյունադործումը այլ երկրները չինացիներից սովորեցին և ոչ միայն այդ, այլև թնդանոթներ ձուլելը և ծովում լաստով նավարկելը, նմանապես և գրքեր տպելը Եվրոպայում չինացիներից սովորեցին: Որովհետև երբ կալմիկները (խոսքը մոնղոլների մասին է – Հ. Մ.) և թաթարները Չինաստանն առան, նրանց Հետ Չինաստան եկան Հայր Օդորիկոն (Օդորիկո Պորդենոնացին – Հ. Մ.), Անտոն Հայր և Մարկո Պավել (Մարկո Պոլո – Հ. Մ.) վենետիկցիներ և իրականում Չինաստանից այդ արհեստները և արվեստները նրանք Եվրոպա բերին»:

Քիչ բան է Հայտնի գեպի Չինաստան Անտոն Սուլթանիեցու ուղու մասին: Միայն նրա աշխատության մեջ Ուզբեկ խանի տիրույթների, «չինական մեծ դետերի և մեծ ջրերի», ինչպես նաև Կասսայ և Կամբալեք (Պեկին) քաղաքների հիշատակությունը հիմք է տալիս պնդելու, որ նա անցել է, այսպես կոչված, «Հյուսիսային ուղիով»՝ Օթրարով (Սիր-Դարյայի ավազան), Տյան-Շանի լեռներով և այլա «Մետաքսի ճանապարհի» Հյուսիս-արևմտյան Չինաստանի տարածքով անցնող Հատվածով:

Անտոն Սուլթանիեցու ճանապարհորդությունը չի կարելի Համեմատել Մարկո Պոլոյի և Օդորիկո Պորդենոնացու ճանապարհորդությունների հետ: Այնուամենայնիվ, նրա անցած ճանապարհը սովորական երևույթ էր Հարյուրավոր կիլոմետրեր կտրել անցնելով Հասել է Խորասան (Իրանում), Միջին Ասիայով Խուանխե և Յանցզի գետերով. Չինական մեծ ջրանցքով նա Հասել է Չինաստանի մայրաքաղաքը:

1 Bibliotheque Nationale. Ms. Fr., 1380, 2810. Հ. Մ. Ա ն ա ս յ ա ն. Հայկական մանադիտություն. Հ. Ա, Երևան, 1959, էջ 983:

2 Էջեր Հայ գաղթավայրերի պատմության. Երևան, 1996, էջ 105:

3 Նույն տեղում: Н и к о л а й М и л е с к у С п а ф а р и й. Сибирь и Китай. Кишинев, 1960, с. 184.

Ինչ վերաբերում է «արհեստներին և արվեստներին», մասնավորապես գրքի տպագրությանը, ապա պետք է նշել, որ ոչ Անտոն Սուլթանիեցին, ոչ էլ Մարկո Պոլոն ուղղակի տեղեկություններ չեն տալիս Ձինաստանում գրքի տպագրության մասին: Ուսումնասիրողները միայն այն ենթադրություն են անում, թե Ձինաստանում տպագրության համար գործածվող տախտակների մասին Մարկո Պոլոյի պատմածը նպաստել է գրքի տպագրության՝ Եվրոպա մուտք գործելուն: Հարկ է ավելացնել, որ Մարկո Պոլոյի ժամանակներում, փայտե տախտակների վրա տառատեսակները դեռևս պատրաստվում էին թրծված կավից: Սակայն XIV դարից սկսած, այսինքն Անտոն Սուլթանիեցու օրոք, գրանք արգեն բրոնզից էին ձուլվում: Գուտենբերգի առաջադեմ քայլը այն էր, որ նա սկսեց տառատեսակները ձուլել մետաղից՝ լիտերների տպածեկերով:

Ուշագրավ է նաև թղթագրամների նկարագրության մեջ Անտոն Սուլթանիեցու տված մի մանրամասն, այն, որ Ձինաստանում նրա գտնվելու տարիներին, այսինքն XIV դ. 30-ական թվականներին, թղթագրամները, առաջին անգամ լինելով, թողարկվում էին երկու կարմիր և սև գույնով: Պետք է ենթադրել, որ երկգույն թղթագրամի տպագրության մասին Անտոն Սուլթանիեցու հաղորդումը կարող էր նպաստել Եվրոպայում գունավոր տպագրության գաղափարի ծագմանը: Հայտնի է, որ առաջին երկգույն գիրքը Ձինաստանում տպարկվել է 1340 թ.:

Կան Անտոն Սուլթանիեցու մասին կողմնակի աղբյուրներից քաղված տեղեկություններ: Դրանցից պարզվում է, որ նա XVI-XVII դդ. արևմտաեվրոպական գրականության մեջ Անտոն Հայ անունով հայտնի է եղել որպես Ձինաստան ճանապարհորդած անձնավորություն, որ այնտեղից Եվրոպա էր բերել չինական տպագրության գաղտնիքը: Այդ մասին, մասնավորապես, պատմվում է Կլոդ Դյուրբ Բուրբոնուայի «Աշխարհի լեզուների պատմության գանձերը» գրքում: XVI դ. հեղինակներ Գիլյոմ Պոստելայի (Postellus) և Ամվրոսիուս Թեզեուսի (Thezeus) հայերենի քերականության և Հայ գրքի տպագրության պատմության շարադրանքին անդրադարձած աշխատություններում հղումներ կան, որոնցում հիշատակվում է նաև «վենետիկցի» Անտոն Հայը (Haythou Armenian)⁴:

Պետք է նշել, որ որոշ պատմաբանների աշխատություններում Haythou բառը շփոթվում է Հեթում պատմիչի անվան հետ: Haythou բառը նշանակում է Հայ (Armenian): Անտոն Սուլթանիեցու «վենետիկցի» մականունը ծագում է նրանից, որ նա, Հավանաբար, Իրանից է Վենետիկ եկել: Հավանական է, որ Վենետիկում Անտոն Սուլթանիեցին գրել է իր մյուս աշխատությունը՝ «Ընդդեմ մահմեդականաց» խորագրով (1347 թ.) ("Liber contra Mahometanos"), որն, ինչպես կարծում են, պատմական տեղեկություններ է պարունակում իրանահայերի դրուսթյան մասին:

Անտոն Սուլթանիեցին այն մարդկանց թվում է, որոնք կարողացան վեր հանել եվրոպական և չինական աշխարհները բաժանող վարագույրը, նրանց միջև եղած սահմանները դարձնել փոխթափանցելի:

Անտոն Սուլթանիեցու գրառումները հայերեն լեզվով հրատարակվում են առաջին անգամ:

ԼՄԱՅԱԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

4 Ռ. Ի շ ի ս ա ն յ ա ն. Հայ գրքի պատմություն. Հ. 1, Երևան, 1977, էջ 389:

5 V. M. Fontana. Monumenta Dominicana. Rome, 1675, p. 217. Կ ղ Ե մ Ե ս Գ ա լ ա ն ո ս. Միաբանություն հայոց սուրբ եկեղեցվոյ ընդ Մծի սուրբ եկեղեցվոյն Հռոմայ. Հ. Ա, Հռոմ, 1650:

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԶԻՆԱՍՏԱՆԻ ՄԵԾ ԽԱՆԻ
ՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ԿԱԹՈՒՅԻ ՄԵԾ ԽԱՆԻ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Այստեղ սկսվում է Կաթայի¹ մեծ խանի թաթարների միահեծան կայսեր պետություն և իշխանություն և նրա կայսրության կարգ ու կանոնի զարմանալի պատմությունը: Եվ նրա մյուս իշխաններինը թարգմանված լատիներեն Սալթանսի² կոչված մի արքայի սկոպոսի կողմից, որին Հովհան քսաներկուերորդ պապի՝ կարգադրություն տրվել է այդ անունը, և թարգմանված լատիներենից ֆրանսերեն⁴ Իպպրի վանական երկայն Հովհանի կողմից՝ Սուրբ Բերտենի տոնից մինչև Սուրբ Օմերի տոնը:

Կաթայի մեծ խանը մեծ և շատ հզոր տիրակալ է աշխարհի բոլոր թագավորների և տիրակալների թվում: Նրան են ենթարկվում և հպատակվում երեք այլ մեծ կայսրեր: Այն է՝ Կամբալեքի⁵ կայսրը, Բուսսայի⁶ կայսրը, Ուզբեկի⁷ կայսրը: Այս երեք կայսրերը կենդանի ընծառյուծներ, ուղտեր, կերրաղեններ⁸ և շատ մեծ առատություններ այլևայլ թանկարժեք զարդեր են ուղարկում վերոհիշյալ խանին՝ իրենց տիրակալին, քանի որ նրանք նրան ընդունում են որպես իրենց միապետ և տիրակալ: Այս երեք կայսրերն ակնհայտորեն շատ հայտնի են և շատ հզոր, քանի որ, երբ Վստորի⁹ կայսրը պատերազմում էր և պետք է կոչեր Բուսսայի կայսրի դեմ, նա ռազմադաշտ բերեց յոթ հարյուր և յոթ հազար ձիավոր մարդկանց՝¹⁰ առանց բոլորովին նեղություն տալու իր կայսրությանը: Ուրեմն որքան մեծ կլինի մեծ խանի հզորությունը, որն իր իշխանության ներքո ունի այգպիսի և այդքան հզոր ռազմիկներ և հպատակներ: Նրա կայսրությունը կոչվում է Կաթանուս կամ Կաթայ. այն սկսվում է ուղղակի արևելքում¹¹ և շարունակվում է մինչև Մեծ Հնդկաստան¹² և ուղիղ գծով տարածվում է դեպի արևմուտք այնքան, որքան կալի է ճամփա գնալ վեց ամսում¹³: Այդ կայսրության մեջ կրկու շատ մեծ քաղաք կա՝ Կամբալեք և Կասսայ¹⁴: Նրա թագավորության մեջ բոլորը՝ մեծ, թե փոքր, նրա ճորտերն ու ստրուկներն են: Երկրի բնակիչներն այնքան հնազանդ են և այնքան են վախենում իրենց տիրակալից՝ Կաթայի մեծ խանից, որ նրանք չեն համարձակվում նրան որևէ բանում առարկել կամ էլ արձակած հրամանը չկատարել: Մի անգամ, երբ նրա մեծ իշխաններից մեկն այնքան վատ էր վարվել ճակատամարտի ժամանակ, որ մեծ վնաս էր հասցրել, և այդ բանն իմացվել էր խանի կողմից, վերջինս նրան պատվիրեց նամակով, որ իրեն ուղարկի իր գլուխը. այդ նամակը կարդալուն պես այդ արդարացի իշխանը ուղարկեց իր մարդկանց և առանց բռնատանալու և առանց հակաճառություն համբերատար կերպով թողեց, որ գլուխը կտրեն: Խանը շատ արդար կերպով դատում է ինչպես մեծ, այնպես էլ փոքր մարդկանց տարին մեկ անգամ առաջին լուսնի առաջին օրը¹⁵, որը տարվա առաջին օրն է: Վերոհիշյալ կայսրը հայտնվում է իր ժողովրդին՝ զարդարված ոսկեզօծ և արծաթազօծ ծիրանիով և թանկագին քարերով. այդ ժամանակ

* Այլ օրինակներում՝ մեկնաբանված («interprete») լատիներենով:

ամբողջ ժողովուրդը նրա առջև ծնկի է գալիս, պաշտում նրան և ասում. ահա այստեղ մեր աստվածն է երկրի վրա, որը ողորմածաբար մեզ տալիս է լիություն և մեծ հարստություն և որը մեզ պարգևում է խաղաղություն և արդարադատություն: Այդ ժամանակ կայսրը չի մերժում մարդկանց արդար դատավճիռ կայացնել: Այդ ժամանակ նա իր գոհունակությունն է հայտնում ամենակարող աստծուն: Նա ազատում է բանտարկյալներին և շատ անգամ ներում և գթություն պարգևում բոլոր տեսակ մարդկանց, որոնք դրանց կարիքն ունեն և որոնք ներում են հայցում, բացառությամբ երեք տեսակ մարդկանց. սրանց հանդեպ, սակայն, նա բոլորովին ներողամիտ չի լինում: Այն է նրա հանդեպ, որ անարգ ձևով ձեռք է բարձրացրել հոր և մոր վրա: Նրա, ով կեղծել է թագավորի թղթադրամը¹⁶ և նրա, ով թունավորել է որևէ մեկին կամ թույն է տվել խմելու: Այս երեքին նա ոչ մի շնորհ չի անում: Այդ օրը նա տալիս է շատ մեծ առատություն ոսկի և արծաթ և թանկարժեք քարեր ու այլ արժեքավոր բաներ: Ամենափոքր նվերը, որ նա անում է, արժի ամենաքիչը մի ոսկե բալիսմ¹⁷ և հաճախ հիսուն բալիսմ: Բալիսմն արժե հազար ոսկե Ֆլորին¹⁸: Հիշյալ կայսրը բարեպաշտ է և ողորմած: Նա միշտ ամբարում է իր և իր հպատակների համար ցորեն, բրինձ և ամեն տեսակ հացահատիկ: Նա բացել է տալիս իր մառանները¹⁹ և տալիս է իր ցորենը և իր բրինձը, և այսպիսով, մեծ առատություն է լինում մեծ ողորմածության պահերին: Նա շատ ողորմություն է տալիս աղքատներին աստծու սիրո համար: Եվ երբ որևէ մեկը մարմնով այնքան թուլացած է, որ չի կարող վաստակել կամ այնքան աղքատ, որ ապրելու միջոց չունի, կայսրը հոգալ է տալիս նրա բոլոր կարիքները: Եվ նա այդ անում է իր ողջ թագավորության մեջ: Նրա հարստությունն իր սևփական շահույթներից է և հարկերից և հանված շատ մեծ սնդուկներից, որոնք անթիվ են ու անհամար: Նա ունի գանձապահներ և ոսկով, արծաթով, թանկարժեք քարերով և այլ թանկարժեք զարդերով լի մեծ տներ՝ հատկապես հիմնական քաղաքներում: Իր թագավորության մեջ տարբեր տեղերում նա ունի նաև տներ²⁰, որտեղ մնում են ձիավոր և Հետիոտն սուրհանդակներ: Նամակատարներն ունեն կրծքին կամ փոկից կախված զանգակներ, այնպես, որ երբ որևէ սուրհանդակ է գալիս նամակներ բերելով կայսրից և մոտենում է այդ տներից որևէ մեկին, նա հնչեցնում է զանգը: Եվ այդ ձայնի վրա նրան է հավասարվում մի այլ սուրհանդակ և վերցնում է նամակները և տանում առաջ՝ մինչև մի այլ տուն: Եվ նույն ձևով մյուսները, որոնք անդադար ընթանում են օր ու գիշեր այնքան ժամանակ, մինչև նամակները կհասնեն այնտեղ, ուր ուղարկված են: Եվ այսպես, կայսրը տասնհինգ օրվա ընթացքում լուրեր է ստանում մի երկրից, որ նույնքան հեռու է որքան երեք ամսվա ճանապարհը²¹: Բացի այդ, նա մեծ պատվով ընդունում է սուրհանդակների և դեսպանների որևէ օտար երկրից կամ իշխանությունից և հոգում բոլոր նրանց կարիքները, ովքեր գնում և գալիս են իր ողջ թագավորությունով:

ԿԱԹՈՒՅԻ ՄԵՏ ԽԱՆԻ ՄԱՍԻՆ. ԿԱԹՈՒՅԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ՝ ՊԱՊԻ ՄԱՍԻՆ

Թագավորութեան մեջ կա բարձրագույն եպիսկոպոս, ինչպես մեզ մոտ պապն է: Երկրի բնակիչները և հավատացյալները նրան կոչում են մեծ տոնցիոս²². Նա հպատակ է և ենթարկվում է Հիշյալ կայսրին՝ մեծ խանին, որպես իր բարձրագույն տիրակալի: Բայց իր տիրակալը նրան գասում է մյուսներից բարձր: Երբ նրանք ձիավարում են միասին, կայսրը նրան ձիավարել է տալիս ուղիղ իր կողքին, և կայսրը չի մերժում նրա խնդրած ոչ մի շնորհ: Մեծ տոնցիոսի գլուխն ու մորուքը միշտ սափրված են, գրա համար գլխին կարմիր գլխարկ կա և միշտ կարմիր է հագնված: Նա իշխանութուն ունի Հիշյալ ողջ թագավորութեան կղերականութեան և իր հավատի կրոնավորների վրա: Նա է իրավասու նրանց պաշտոնը փոխել կամ պատժել, և նրա կարգադրություններին կայսրը ոչնչով չի խառնվում: Կղերիկոսների և կրոնավորների թվում մեծ տեղ ունեն եպիսկոպոսութունները և աբբայութունները²³. և բոլոր ենթարկվում են մեծ տոնցիոսին: Կայսրութեան ամեն քաղաքում կան աբբայութուններ կրոնավոր այրերի և կանանց, որոնք ապրում են ըստ այդ երկրի հավատի՝ մեծ տոնցիոսի հպատակության և իշխանութեան ներքո: Հիշյալ կայսրութեան մեջ գովար թե գտնվի մի քաղաք, որտեղ չլինեի մի աբբայութուն, և ամեն աբբայութունում կա առնվազն երկու հարյուր հոգի: Նրանք շատ հարուստ են և այդ մեծ հարստություններից նրանք առատ ողորմություններ են տալիս աստուծու սիրո համար: Նրանք շատ կանոնավոր կյանք են վարում. օրական յոթ անգամ ժամերգություն են անում և վեր են կենում առավոտյան: Նրանք մետաղե զանգեր ունեն²⁴ արված սկահակի ձևով, որոնցով հնչեցնում են ժամերը: Նրանք առաքինություն են պահում և ոչ մի կղերական կրոնավոր չի ամուսնանում: Նրանք կուսակալներ են և պաշտում են մի շարք կուռքերի: Բոլոր կուռքերից վեր նրանք դասում են չորս աստվածների²⁵: Նրանք ասում են, որ կա ավելի մեծ աստված²⁶, որը վեր է բոլոր մեծ ու փոքր աստվածներից:

ԿԱԹՈՒՅԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿԻ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Կաթայի այս թագավորությունը շատ բնակեցված է. և կան շատ քաղաքներ՝ բավականին ավելի մեծ, քան Փարիզը կամ Ֆլորենցիան²⁷. և շատ կան լավ բնակեցված վայրեր. և կան նաև անթիվ քաղաքներ, շատ կան գեղեցիկ մարգագետիններ և լավ արոտավայրեր և լավ բույր արձակող խոտեր: Ողջ կայսրութեան մեջ կան շատ մեծ գետեր և մեծ ջրեր²⁸: Այնպես, որ թագավորութեան և երկրի կեսը ջրեր են, որոնցում ապրում է Հիշյալ կայսրութեան մեծաքանակ բնակչության մի մեծ մասը: Նրանք փայտե տներ են կառուցում նավերի վրա և այդ տները ջրով գնում են վեր ու վար. և բոլորն իրենց տների մեջ գնում են երկրից երկիր՝ առևտուր անելով²⁹. և այդ տների մեջ մարդիկ ապրում են իրենց ողջ ընտանիքով՝ կանանցով և երեխաներով, իրենց տան ողջ կահ-կարասիով և անհրաժեշտ իրերով. այսպես իրենց ողջ կյանքի ընթացքում ջրի վրա են ապրում: Եվ

այնտեղ կանայք պառկում են իրենց մահճակալներում և ամեն ինչ անում են այնպես, ինչպես մյուսները, որ ապրում են գետնի վրա: Եվ եթե նրանցից ոմանց հարցնեին. թե որտեղ են ծնվել. այլ պատասխան չէին կարողանա տալ, քան այն, որ ծնվել են ջրի վրա: Ջրի վրա ապրող նույնքան մարդ կա, որքան գետնի վրա: Եվ այնքան շատ բնակչություն կա, որ երկրի անասունները նրանց չեն բավարարում: Ավելի հարմար է, որ դրանք բերեն այլ երկրներից, ահա ինչու միսն այնտեղ թանկ է: Այս երկրում շատ առատ են ցորենը, բրինձը, գարին և այլ հացահատիկներ, որոնցից խանը ամեն տարի առատ բերք է ստանում և պաշարում է մառաններում, ինչպես վերն ասվեց: Նրանք բրնձի բերքահավաք են անում տարին երկու անգամ: Այնտեղ չի արտադրվում ոչ ձեթ, ոչ գինի և չի աճեցվում խաղող³⁰. և բոլորովին այդ բաները չեն ունենա, եթե այլ տեղերից չբերեն: Ահա ինչու դրանք այնտեղ շատ թանկ են: Նրանք այնպես են անում, որ առատ լինեն ձեթը, գինին, բրինձը, ամեն տեսակ մրգերը, երբեմն էլ կաղինը, որ նրանք չունեն³¹. բայց նրանք ունեն այնքան մեծ քանակությամբ շաքար, որ զարմանք է. գրա համար էլ այնտեղ ավելի է ժան է: Երկիրը շատ խաղաղ է և ոչ ոք այնտեղ չի համարձակվում գնեք կրել, ոչ էլ կռիվ սկսել, բացի միայն նրանցից, ովքեր կայսեր կողմից լիազորված են պաշտպանելու իր անձը և որոշ քաղաքներ: Վերը նշված Բուսսայի կայսրության մեջ աճում է ծառերի մի տեսակ, որ ճարպ է տալիս և շատ օգտակար է երկրի բնակիչներին³². և կան այնպիսի ծառեր, որոնց կեղևից դուրս է գալիս սպիտակ կաթնանման հեղուկ քաղցր ու համեղ³³. այդ ծառերից շատ կա. և երկրի բնակիչները աշխատում են և հաճույքով ուտում են ինչպես այժի կաթը: Երբ այդ ծառերը կտրում են որևէ տեղից՝ լինի դա ճյուղերից կամ այլ տեղից, նրանց կտրվածքից առատորեն դուրս է գալիս մի հեղուկ, որն ունի գինու գույն և համ: Այլ ծառեր էլ կան, որոնք տալիս են կաղնու կամ ընկույզի նման պտուղներ³⁴: Երբ այդ պտուղը հասունանում է, երկրի բնակիչներն այդ քաղում են և աղում ինչպես հացահատիկը՝ ցորենի նման, գրանից պատրաստում են հացի խմոր և այլ ուտելիքներ, որ ուտում են մեծ հաճույքով:

ԿԱՄԲԱԼԵՔ ԵՎ ԿԱՍՍԱՅ ԵՐԿՈՒ ՔԱՂԱՔՆԵՐԻ
ԿԱՐԳ ՈՒ ԿԱՆՈՆԻ ՄԱՍԻՆ

Կամբալեք և Կասսայ երկու քաղաքները շատ մեծ են և շատ հայտնի: Նրանցից յուրաքանչյուրը երկու մղոն շրջագիծ ունի և ամբողջովին շրջափակված է պարսպով: Այնքան շատ բնակիչ կա այնտեղ, որ Կամբալեք քաղաքը պաշտպանելու համար կարգված զինվորների թիվը միայն քառասուն հազար է: Կասսայ քաղաքում նրանք ավելի մեծաքանակ են, քանի որ այնտեղ ավելի շատ բնակչություն կա. քանի որ սա շատ առևտրական քաղաք է. այս քաղաք առևտուր անելու են գալիս երկրի բոլոր վաճառականները. և այն շատ առատ է ամեն տեսակի ապրանքներով: Եվ վերոհիշյալ սարացիները³⁵ խնամքով օր ու գիշեր պահպանում են վերոհիշյալ քաղաքները:

ԱՅԴ ԱՄԲՈՂՋ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԸՆԴՈՒՆՎԱԾ
ԴՐԱՄԻ ՄԱՍԻՆ

Մեծ խանր թողարկում է թղթագրամ, որի ճիշտ մեջտեղում կարմիր նշան կա և նրա շուրջը՝ սև տառեր: Եվ ըստ նրա վրա եղած նշանի՝ դրամն ավելի կամ պակաս արժեք ունի: Մեկը կես գինարի³⁶ արժեք ունի, մյուսը՝ մի գինարի. և այսպես ավելի կամ պակաս. այդ թղթագրամի արժեքն այնտեղ ապահովված է ոսկով և արծաթով: Այս երկրում կարելի է գտնել ավելի բազմաանակ ապրանքներ, քան Հռոմի և Փարիզի կողմերում³⁷: Նրանք ունեն մեծ քանակությամբ ոսկի և արծաթ և թանկարժեք քարեր: Քանի որ երբ զրսից վաճառականներ են գալիս այնտեղ առևտուր անելու, նրանք թողնում են ոսկին և արծաթը և թանկագին քարերը և տանում են երկրի ապրանքները՝ համեմունքներ, մետաքսե, ոսկե գիպակներ, որոնց լայն շուկա են նրանք այնտեղ գանում: Վերոհիշյալ կայսրն ունի այնպիսի մեծ գանձեր, որ զարմանք է. և դրանք բոլորն ապահովում են թղթագրամը³⁸: Եվ երբ այդ թղթագրամը չափազանց հին է և վնասված, այնպես, որ հնարավոր չէ ինչպես հարկն է արժեքն անվանել կամ ճանաչել, այն տանում են թաղավորի գրամահատների մոտ՝ դրա համար հատկացված թագավորական սենյակը. և եթե դրամի նշանը կամ թագավորի անունը երևում են նրա վրա, թագավորի գրամահատները հնի փոխարեն տալիս են նորը, ամեն հարյուրի համար երեքով պակաս նորացման համար: Նրանք իրենց բոլոր արտոնագրերը նույնպես թղթից³⁹ են պատրաստուս:

ԵՐԿՐԻ ԲՆԱԿԻՋՆԵՐԻ ԱՊՐԵԼԱԿԵՐՊԻ ՄԱՍԻՆ

Հիշյալ կայսեր մարդիկ հաղնվում են շատ պատվավոր և հարուստ ձևով և շոայլ են ապրում: Մետաքսի մեծ առատության, ինչպես և այն պատճառով, որ նրանք վուշ չունեն, բոլորն ունեն մետաքսե շապիկներ. և նրանց շապիկները կամոկայից⁴⁰ են և այլ հարուստ դիպակներից⁴¹ և զարդարված են ոսկով, արծաթով և թանկարժեք քարերով: Նրանք երկար թևքեր ունեն, որոնք ծածկում են մատների եղունգները: Մեծ, խոշոր ամանեղևներ նրանք պատրաստում են եղեգնից: Նրանք ուտում են տարբեր տեսակի կենդանիների միս. և երբ մեծ տոնախմբություններ են ունենում, նրանք ուղտեր են սպանում և իրենց եղանակով համեղ կերակուրներ պատրաստում⁴²: Նրանք մեծ առատությամբ ձուկ և այլ բաներ ունեն: Նրանց ապրելակերպը նման է այլ մարդկանց ապրելակերպին:

ՀԱՆԳՈՒՑՑԱԼՆԵՐԻՆ ԹԱՂԵԼՈՒ ԵՂԱՆԱԿԻ ՄԱՍԻՆ

Երբ որևէ երեխա է ծնվում, հայրն ու մայրը լավ մտապահում են և գրանցում են ծննդյան ժամանակը⁴³: Եվ երբ նա մահանում է, բարեկամները և մտերիմները նշան դնում են թղթե դագաղի մեջ՝ զարդարված ոսկով և արծաթով և նրա մեջ հանգուցյալի հետ զմուռս խունկ են դնում և հետո դնում են սայլի վրա, և նրա տոհմակիցները պարաններով քաշում են այդ սայլը դեպի դրա համար հատկացված մի հատուկ վայր. և այնտեղ վառում

են դիակր դագաղի և սայլի հետ միասին⁴⁴ . և այդ բանը հետևյալ ձևով են հիմնավորում. մարդկանց մարմինը հարկ է այդպես կրակով մաքրել, որպեսզի կարողանան մաքուր ձևով հարուժյուն առնել: Իրենց հանգուցյալներին աճյունացնելուց հետո նրանք իրենց տներն են վերադառնում և արձան են պատրաստում՝ հանգուցյալի նմանությամբ և նրա հիշատակին նվիրված: Եվ այդ արձանը նրանք մի որոշակի տեղ են դնում, որպեսզի ամեն տարի նրա ծննդյան օրը արձանի առջև վառեն լիգնուս, ալոնե⁴⁵ և բուրավետ այլ համեմունքներ և այդպիսով նշեն հանգուցյալի ծննդյան հիշատակը:

ԱՅԴ ԵՐԿՐՈՒՄ ԱՊՐՈՂ ԿՐՏՍԵՐ ԵՂԱՅՐՆԵՐԻ⁴⁶ ՄԱՍԻՆ

Վերոհիշյալ Կամբալեք քաղաքում կար մի արքեպիսկոպոս Ֆրանցիսկյան միաբանությունից, որի անունն էր եղբայր Giovanni Corvino⁴⁷. Նա լեդատ⁴⁸ էր՝ ուղարկված Կլեմենտ պապի⁴⁹ կողմից: Այս արքեպիսկոպոսը վերոհիշյալ քաղաքում ստեղծեց Ֆրանցիսկյանների երեք հաստատություն, որոնք մեկը մյուսից չորս մղոն հեռավորության վրա են դրվում: Երկու ուրիշն էլ ստեղծեց Ջայթոն⁵⁰ քաղաքում, որը շատ հեռու է Կամբալեքից երեք ամիս ճամփա դնալու չափով, և ծովի կողքին է. սրանցում կային երկու Ֆրանցիսկյան եպիսկոպոսներ: Մեկի անունն էր եղբայր Անդրիյո Փարիզեցի⁵¹: Մյուսի անունն էր եղբայր Պետրոս Ֆլորենցիացի⁵²: Այդ Հովհան (Giovanni) արքեպիսկոպոսը Հիսուս Քրիստոսի հավատին փոխեց շատ մարդկանց: Նա շատ պարկեշտ կյանքով ապրող մարդ էր՝ աստծուն և մարդկանց հաճո, և վայելում էր կայսեր բարեհաճությունը: Կայսրը միշտ հոգալ էր տալիս նրա մարդկանց բոլոր կարիքները և մեծ հանդուրժողականություն էր ցուցաբերում բոլորի՝ թե՛ քրիստոնյաների, թե՛ կոապաչտների հանդեպ. և, իհարկե, նա ամբողջ երկիրը քրիստոնեական հավատի կփոխեր, եթե նեստորականները⁵³ սուտ քրիստոնյաները ե աղանդավորները նրան չխանդարեին⁵⁴: Եվ հիշյալ արքեպիսկոպոսը մեծ ջանք դորձադրեց նեստորականներին Հռոմի մեր սուրբ մայր եկեղեցուն հնազանդեցնելու համար, առանց որի նրանք չէին կարողանա փրկվել: Եվ այդ պատճառով այդ աղանդավոր նեստորականները մեծ ատելություն առնեին նրա հանդեպ: Այդ արքեպիսկոպոսը աստծու կամքով վերջերս վախճանվեց⁵⁵: Նրա թաղմանը և դերեզմանին մեծ քանակությամբ մառդիկ եկան՝ քրիստոնյաներ և կոապաչտներ, և այդ կոապաչտներն իրենց սովորության համաձայն պատուում էին իրենց սգո զգեստները: Եվ այդ քրիստոնյա և կոապաչտ մարդիկ մեծ բարեպաշտությամբ վերցրեցին արքեպիսկոպոսի հագուստները և դրանք մեծ ակնածանքով պահեցին որպես մասունք⁵⁶: Այնտեղ նա թաղվեց շատ պատվավոր ձևով՝ հավատացյալ քրիստոնյաների եղանակով. և դեռ այցելում են մարդիկ նրա շիրիմին շատ մեծ բարեպաշտությամբ:

ԱՅՆՏԵՂ ԱՊՐՈՂ ՆԵՍՏՈՐԱԿԱՆՆԵՐԻ ԸՆԴՈՒՄՆԵՐԸ
ՔՐԻՍՏՈՆԵՍԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Վերոհիշյալ Կամբալեք քաղաքում կան մի տեսակ սուտ քրիստոնյաներ, որոնց նեստորականներ են անվանում: Նրանք հույների ձևերն ու սովորություններն ունեն⁵⁷ և բոլորովին չեն հնազանդվում Հռոմի սուրբ եկեղեցուն, այլ մի ուրիշ աղանդից են և մեծ ատելություն ունեն կաթոլիկ քրիստոնյաների հանդեպ, որոնք հնազանդ են վերոհիշյալ սուրբ եկեղեցուն: Եվ երբ այդ արքեպիսկոպոսը, որի մասին վերը խոսեցինք, կառուցեց գոմինիկյան եղբայրների արքայություններ⁵⁸, նեստորականները գիշերով դրանք քանդեցին և գործեցին այնտեղ ամեն չարիք, որ կարողացան: Քանի որ նրանք չէին համարձակվում հրապարակավ և բացահայտ կերպով չարիք գործել ոչ վերոհիշյալ արքեպիսկոպոսի, ոչ նրա եղբայրների, ոչ էլ այլ հավատացյալ քրիստոնյաների հանդեպ, որովհետև կայսրը նրանց սիրո մեծ նշան էր ցույց տալիս: Վերոհիշյալ Կաթոլիկ կայսրությունում ապրում են ավելի քան երեսուն հազար նեստորականներ⁵⁹. և նրանք շատ հարուստ մարդիկ են, բայց շատերը կասկածանքով են վերաբերվում և վախենում են այդ քրիստոնյաներից: Նրանք ունեն շատ գեղեցիկ և շատ բարեպաշտ եկեղեցիներ խաչերով և աստծու ու նրա սրբերի պատվին պատկերներով: Նրանք շատ ծառայություններ են մատուցել հիշյալ կայսրը և շատ հոգ տարել նրա մասին, որով, ինչպես կարելի է կարծել, ուզում են հաշտվել և միանալ գոմինիկյան եղբայրների ու այդ երկրում ապրող մյուս լավ քրիստոնյաների հետ: Նրանք իսկական հավատի կրեբերն ողջ երկիրը և կայսրերին:

ԱՅՆ ԶԵՐՄ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԻ ՄԱՍԻՆ, ՈՐ ՄԵԾ ԿԱՅՈՐՆ ՈՒՆԻ
ՎԵՐՈՂԻՇՅԱԼ ՔՐԻՍՏՈՆԵՍԱՆՆԵՐԻ ՀԱՆԴԵՊ

Հետևում է այն, թե ինչպես մեծ իրանը օգնում է այն քրիստոնյաներին, որոնք այդ թագավորության մեջ հնազանդվում են Հռոմի սուրբ եկեղեցուն և հոգալ է տալիս նրանց բոլոր կարիքները: Առաջին հերթին նա նրանց շատ նվիրված է և նրանց հանդեպ մեծ սեր է տածում: Եվ երբ նրանք դիմում են նրան և որևէ բան են խնդրում իրենց եկեղեցիները, խաչերը, սրբարանները Հիսուս Քրիստոսի պատվին վերանորոգելու համար, նա մեծ հոժարություն նրանց այն շնորհում է, պայմանով, որ նրանք աստծուն աղոթեն նրա համար և նրա առողջության համար. և մանավանդ իրենց քարոզներում: Եվ մեծ հոժարությամբ լսում է և ուզում, որ բոլորը աղոթեն նրա համար և մեծ հոժարությամբ հանդուրժում է ու օգնում, որ եղբայրները աստծու հավաք քարոզեն կապալաչտների եկեղեցիներում, որ նրանք կոչում են փոխանորդներ: Եվ նաև հոժարությամբ հանդուրժում է, որ կապալաչտները այնտեղ գնում են մեծ հոժարությամբ և հաճախ մեծ բարեպաշտություններ և եղբայրներին շատ ողորմություն են տալիս: Այդ կայսրը նաև մեծ հոժարությամբ ուղարկում է իր մարդկանց օգնելու քրիստոնյաներին, երբ դրա կարիքն ունեն և երբ այդ մասին խնդրում են կայսրին⁶⁰:

ՎԵՐՋ

Այստեղ վերջանում է զարմանալի պատմությունը՝ այդքան հաճելի և հետաքրքրական մեծ խան կոչված Թաթարստանի մեծ կայսեր՝ Թաթարների տիրակալի մասին: Տպագրված վերջերս Փարիզում հազար հինգ հարյուր քսան թվին, ապրիլ ամսվա տասնհինգերորդ օրը, Հովհան Սուրբ Դընի գրավաճառի համար, որ մնում է Աստվածամոր նոր փոզոցում Սուրբ Նիկողայոս ցուցանակի տակ:

Թարգմ.՝ հին ֆրանսերենից
ԱՄԱԼՅԱ ՄՈՒՐԱԴՅԱՆԸ

Ծ Ա Ն Ո Թ Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր

1. Կաթայ – Հյուսիսային Չինաստանի անվանումը (Յանցզի գետից Հյուսիս): Հարավային Չինաստանը կոչվում է Մանգի, Թաթարների կայսրություն կամ Մեծ Թաթարստան՝ Յուանյան կայսրություն (1271-1368), որի մեջ էին մտնում Կաթայը և Մանգին:
2. Սալթանսի. – Անտոն Սուլթանիեցու անվան աղավաղված ձևը, ծագում է Սուլթանիե քաղաքի անվանումից:
3. Հուսի Հովհան 22-րդ պապ: Աթոռակալել է 1316-1334 թթ.
4. Անտոն Սուլթանիեցու երկը ստեղծվել է Հովհան 22-րդ պապի օրոք:
5. Կամբուլեքի (Խանբալըբի), այսինքն Պեկինի միապետ: Խանբալըբ («Թագավորական քաղաք») անվանումը Պեկինին տվել են մոնղոլները:
6. Բոսսայ-Բոհայ (Մանջուրիա). է. Շեֆերը նշում է, որ Բոհայը ընկած էր «Կորեա թերակղզուց Հյուսիս»: Մի այլ տեղում նա գրում է, որ նրա մի քանի ժողովուրդներ, մասնավորապես «Բոհայ երկրացի մոնղոլները», որոնք բնակվում են Ամուրից հարավ, Չինաստան էին ուղարկում ձիեր (Յ. III e ֆ e p. Золотые персики Самарканда. М., 1981, с. 93, 132):
7. Ուզբեկ կայսրը (խան) (1312-1340) մոնղոլների օրոք եղել է Միջին Ասիայի տիրակալներից մեկը:
8. Մոնղոլ խաներին ենթոթխան կառավարիչների մատուցած նվերի մեջ ընձառյուծների, ուղաների և արծիվների հիշատակումը խոսում է նրանց նկատմամբ ժամանակին չինացիների ունեցած վերարևմուտքի մասին:
9. Վարոր – Սիրիոյի նախկին անվանումների (Վիսսիրուր) տարրերակը:
10. «Յոթ հարյուր և յոթ հազար ձիավոր» – ակնարկ մոնղոլական զորքի ստորաբաժանումների մասին, որը բաղկացած էր տասնյակներից, հարյուրակներից և հազարյակներից:
11. «Ուղղակի արևելքում» արտահայտությունը նպատակ ունի ընդգծել, որ Մոնղոլական կայսրությունը հարակից է ինչպես օվկիանոսին:
12. Ժամանակին «Մեծ Հնդկաստան» էին անվանում այժմյան Հնդկաստանը: «Փոքր Հնդկաստան» էր կոչվում Աֆղանստանը: «Միջին Հնդկաստան» էին համարվում վերոհիշյալ երկրներից հարավ-արևմուտք ընկած տարածքները, որոնք երբեմն սխալմամբ միավորվում էին «Եթովպիա» հասկացությունը: Միջնադարի եվրոպական հրատարակություններում ճանապարհորդությունները Արևելք ոչ հազվադեպ անվանում էին ճանապարհորդություն «Երեք Հնդկաստանների» երկրներ:
13. Վեցամսյա տեղություն ճանապարհը հավասար է մոտավորապես 7 հազար կիլոմետրի, եթե նկատի առնվի օրը 40 կմ արագությամբ շարժվելու հնարավորությունը:

Ինչպես նշվում է Հոռմեացի, արար և այլ ճանապարհորդների ուղեցույցներում, այդպիսի ճամփաբաժինը նայած պայմաններին և տեղանքին, ձիերից և ուղտերից կազմված քարավանը կարող էր անցնել մեկ ցերեկօրում:

14. Խոսքը Խանչժոռուի մասին է: Մարկո Պոլոն այն կոչում է Կիսսայ և նշում, որ այն Թանցղիի գետաբերանում է: Եղել է մետաքսի գործվածքի ավանդական արդյունաբերական կենտրոնի քաղաք:

15. Լուսնային օրացույցը տարբեր ժողովուրդների ստեղծած երեք (լուսնային, լուսնա-արևային, արևային) օրացույցներից մեկն է: Չինաստանում ընդունված է եղել Հնուց անտի:

16. Թուղթը Չինաստանում հայտնագործվել է մ. թ. ա. II դարում: Թղթի Հնագույն մի պատահիկ է հայտնաբերվել վերջերս Շենսի նահանգի Բացյաո վայրում գտնվող դամբարանում: Ավելի ուշ, մ. թ. 105 թ., Թղթի պատրաստման Ցայ Լունի մշակած տեխնոլոգիան առաջինը քայլ էր տվյալ բնագավառում («Курьер» ЮНЕСКО, декабрь 1972, с. 6): «Սուտրա Պրաջնա» աշխարհի ամենահին գիրքը, մ. թ. 868 թ. ստեղծել է չին տպագրիչ Վան Ցյենը: Այն հայտնաբերվել է 1907 թ. Հյուսիս-արևմտյան Չինաստանի Դունխուան քաղաքի գաղտնարանում («Курьер» ЮНЕСКО, январь, 1972, с. 20). Աշխարհում սուտրային Չինաստանում են թղթագրամներ պատրաստվել: Չին գիտնականների կարծիքով դրանք պաշտոնապես շրջանառության մեջ են դրվել մոտ 650 թ.: Դրանք անվանվում էին «Ժոռոգ փողեր» (Ֆեյ ցյան):

17. Բալիսմ – բալիչ (չինական դրամական միավոր): Ըստ աղբյուրների տեղեկությունների, XIII–XIV դդ. բալիչը շրջանառվում էր ինչպես ոսկեդրամի, այնպես էլ թղթե դրամանիշի ձևով:

18. Ֆյուրին – առաջին անգամ XIII դարում Ֆյուրենցիայում կտրված ոսկեդրամ (այստեղից էլ անվանումը):

19. Հին ժամանակներից Չինաստանում կառուցվում էին ցորենի սլետական պաշարների շտամարաններ: Դրանց ծավալների մասին պատկերացում են տալիս վերջերս Լոյանում կատարված պեղումները: Դրանցից մեկը, որի շինարարությունը սկսված է եղել մ. թ. 605 թ. Սույ Հարստության օրոք (589-618), ունեցել է ավելի քան 450 քառ. մ ծավալ: Պարսպապատ տարածքում համակենտրոն շրջաններով փորված 6-8 մետր լայնությամբ, 5-10 մետր խորքով 400 փոսայրամատներում կարող էր տեղավորվել 600 տոննա հացահատիկ («Курьер» ЮНЕСКО, декабрь, 1972, с. 7):

20. Կայարան – փոստատարներ (թյուրք. «յամը», այստեղից էլ ռուս. «յամչիկ») կային ինչպես բուն Չինաստանում, այնպես էլ Մոնղոլական կայսրության ողջ տարածքում:

21. Եռամսյա ճանապարհը, այսինքն 3,5 հազար կիլոմետրը, կարելի էր անցնել օրական 230-240 կմ արագությամբ: Այդպիսի արագությունը կարելի էր ապահովել անընդհատ շարժվելու և ձիերն ու սուրհանգակներին պարբերաբար հերթավորելու միջոցով:

22. Տոնցիուս – հոգևոր անձի բարձրագույն տիտղոս Չինաստանում: Մագում է Թոին կամ Դոին՝ դատավոր բառից:

23. Եպիսկոպոսություն և աբբայություն – այստեղ՝ պագոդաներ (չինբառոտա-տաճար): Պագոդաները Չինաստանում երևան եկան մ. թ. I դ.:

24. Մետաղյա թասածև զանգեր, որոնցով ժամերն էին ազդարարում – միջնադարյան Չինաստանում և հարավ-արևելյան Ասիայի մի քանի երկրներում ազդականչման ավանդական միջոց: Այդպիսի թաս-ժամացույցներին հարվածելով ահազանդում էին վտանգների, քաղաքի բնակիչների տներում կրակը մարելու մասին և այլն:

25. «Չորս աստվածներ» – բուդդայականության մեջ «չորս սուրբ ճշմարտություններ» մարմնավորումները, որոնցից գլխավորը «փրկության» կամ «ազատության» գաղափարն էր: Ի տարբերություն քրիստոնեության և իսլամի, բուդդայականության մեջ չկա արարիչ-աստծու և փրկիչի գաղափարը:

26. «Կա ավելի մեծ աստված» – այսինքն Բուզգա. որպես բարձրագույն էակ այդ աստվածը համեմատվում է նիրվանայի կատարյալ հանգստութան երանելի վիճակի հասած մարդկանց հետ. ծագած լինելով մ. թ. ա. VI-V դդ. Հնդկաստանում, բուդդայականությունը մ.թ. I դ. թափանցեց Չինաստան: Չինական բուդդայականությունը երեք ճյուղ ունի՝ մանդարինական (կամ խանցի) ճյուղին հարում են չինացիները, տիբեթական (լամայականություն) և բալի, որը դավանում են երկրի մի քանի էթնիկական խմբեր:

27. Միջին դարերում Չինաստանում 500 հազար և ավելի բնակիչ ունեցող երկու տասնյակից ավել քաղաքներ կային: 754 թ. մարդահամարի տվյալներով Չանյանում բնակիչների թիվը հասնում էր 2 միլիոնի. Լոյանում մեկ միլիոնից ավելի էր: Մեկ միլիոնի մոտ կամ դրանից ավելի բնակչություն ունեցող քաղաքներ էին Վեյը և Չենգուն (Յ. III e φ e p. Указ. соч., с. 366):

28. «Կան մեծ գետեր և մեծ ջրեր» – Անտոն Սուլթանիեցու այս դիտարկումը աղերսվում է Մարկո Պոլոյի տված տեղեկություններին: Վերջինս, օրինակ, նկարագրելով Յանցզի գետը, այն կոչում է «աշխարհում ամենամեծ» և նշում, որ «Հարյուր քսան օրվանից ավելի երկարություն ճանապարհ էր» և որ գետի վրա նա «միաժամանակ տեսել է ավելի քան հինգ հազար նավ»:

29. «Բուլոբն իրենց տների մեջ դնում են երկրից երկիր՝ առևտուր անելով» – Հարավային ծովերով այլ երկրների հետ Չինաստանի ունեցած առևտրական լայն կապերի մասին է այս նշումը: Հետազոտողների տվյալների համաձայն, ծովային առևտրի ճանապարհները Չինաստանում ձգվում էին երկու ուղղությամբ: Դրանցից մեկը Շանգուն թերակղզու Դենչոու նավահանգստից Դեղին ծովով հասնում էր Կորեա, այնտեղից՝ Ճապոնիա: Մյուսը Կանտոնից (Գուանչեժոու) սկիզբ առնելով Հարավ-Չինական ծովով գնում էր Մալայան Արշիպելագ և Սումատրա, ապա Բենդալյան ծոցով՝ Հնդկաստան, Պարսից ծոց («Курьер ЮНЕСКО, июль, 1984, с. 25):

30. Չինաստանում ձիթապտուղ չի աճում: Տան դարաշրջանում դրանք այս երկրում հայտնի էին պարսից «զեյթուն» անունով, որպես ձիթատու պտուղ (Յ. III e φ e p. Указ. соч., с. 250): Խաղողագործությունը Չինաստանում սկսեց արմատավորվել VII-VIII դդ.: Սակայն խաղողն աճում էր երկրի միայն հյուսիս-արևմտյան շրջաններում: Խաղողի գինին բերվում էր Չաչից (Շաչ, Տաչքենդ), VIII դարից ի վեր (Յ. III e φ e p. Указ. соч., с. 195):

31. «Մանր կաղնին Չինաստանում չի աճում: Բացառությամբ հարավ-արևմուտքում գտնվող Նանչժաո շրջանի, որտեղ աճում է «սողացող» ընկույզը, որ համով նման է իսկականին...» (Յ. III e φ e p. Указ. соч., с. 260):

32. Ամենայն հավանականությամբ նկատի է առնվում մայրին, որի ընկույզից ձեթ են ստանում:

33. Խոսքը հնդկեղեգի մասին է: Նրա ընկույզները օգտագործում են սննդի մեջ, իսկ ցողուններից հյութ են հավաքում:

34. Դա կորեական սոճին է – (*Pinus Koraiensis*): Չինաստանում դրա պտուղների «ծովային սոճու սերմեր» անունն են տվել և ուտում են մաքրած (Յ. III e φ e p. Указ. соч., с. 200):

35. Սարացինացիներ – Արաբիայում հին ժամանակներում հայտնի քոչվոր ցեղ: Այս անունը մեր թվարկության սկզբին տարածվեց նաև արաբների, ապա թուրքերի և Հյուսիսային Աֆրիկայի մուսուլմանների վրա: Այստեղ թյուրքեր: Ինչպես հայտնի է, մոնղոլական զորքի մեծ մասը կազմված էր թյուրքերից:

36. Դինար (լատիներեն դինարի) – հին հռոմեական և միջնադարյան արծաթադրամ: Միջին դարերում շրջանառվում էր արաբական և եվրոպական մի քանի երկրներում (Ֆրանսիա, Իտալիա և այլն):

37. Անտոն Սուլթանիեցին նշում է այն ապրանքների ցուցակը, որոնք օտարերկրյա վաճառականներն ու առևտրականները գնում էին Չինաստանում: Դրանց թվում նա հիշատակում է Համեմունքները, մետաքսը, ոսկեհյուս փարջան:

38. Չինաստանը ուսումնասիրողներից շատերը կասկածի տակ են առնում մինչև Սուլթանիեցին Հանդես եկած հեղինակների այն պնդումները, թե թղթագրամները ապահովվում էին մետաղով: Հայտնի է, որ Խուբիլայը, առավել ևս նրա հաջորդ Թոքթայմուլթը, ձգտելով բնակչությանը սովորեցնել թղթագրամ օգտագործելուն, նույնիսկ արգելել են մետաղագրամների գործառնությունը: Որոշ ժամանակ թղթագրամները երաշխավորվում էին Համապատասխան մետաղարժեքով: Բայց երբ դրանց պաշարները սպառվեցին, թղթագրամները շրջանառվում էին առանց որևէ երաշխիքի: Սրա հետևանքով դրանք չափազանց արժեղրկվեցին (Р. X e н и г. Неведомые земли (Terra Incognita). Т. III, М., с. 146-147):

39. XIII-XIV դդ. Չինաստանում թուղթը լայնորեն օգտագործվում էր ոչ միայն գրքի տպագրության և թղթագրամներ թողարկելու, այլև գործածվում էր փաստաթղթեր, Հրավիրատուներ, լուսամուտներ, ապակու փոխարինիչ, առտնին զանազան իրեր (հովհարներ, հովանոցներ) պատրաստելու համար:

40. Կամկա (կամչա) — մետաքս գործվածքի տեսակ: Այն արդյունագործվում էր հումքի զանազան տեսակներից (չինական եղինջի, կանեփի, բանանի, հնդկեղեգի և այլ մշակարույսերի ցողունը): Ելքային նյութը մետաքսն էր հում-մետաքսը: Կամչան, ինչպես նաև չեսուչան, ցանցկեն կտորը, գազը և այլ գործվածքներ Չինաստանում պատրաստվում էին հնուց ի վեր:

41. Դիսյակը (փարջան) հյուսվում էր մետաքսաթելին փաթաթված ոսկեգույն փայլաթերթից: Օգտագործվում էր նաև արծաթագույն փայլաթերթը: Փարջայի ստացումը շատ աշխատատար է: Դժվարին է նաև փայլաթերթի ստացման եղանակը:

42. Ուղտի միսը կիրառվում էր ընտիր ճաշատեսակների պատրաստման համար, իսկ նրա սապատը նույնիսկ դեղիկատեսի համարում ուներ (Э. III e ф e p. Указ. соч., с. 106):

43. Անտոն Սուլթանիեցու ասածից պարզ չէ, թե Չինաստանում ինչպես էր կատարվում մարդկանց ծննդյան ժամանակի գրանցումը: Սակայն XIV դ. Չինաստանում այդպիսի ինստիտուտի գոյությունն իսկ խոսում է այն մասին, որ երկրում եղել է քաղաքացիական կացություն ակտավորման բարձր զարգացած համակարգ:

44. Հանգուցյալների դիակներն այրելու փաստը վկայված է նաև XIII-XIV դդ. Չինաստան այցելած այլ անձանց հաղորդումներով:

45. Հալվե, ալոե (հուն. αίοε) — շուշանագգիների ընտանիքի ծառ: Փայտանյութը կիրառվում է խնկարկումների համար, քանի որ խեժով հարուստ է և ուժեղ բույր ունի: Այդ ծառի թելանյութից պատրաստվում են լարեր, փսիաթ, կոշտ գործվածքներ: Ալոեի խտանյութից ստացվում են բուրավետ նյութեր, իսկ տերևների հյուսվածքից բուժական պատրաստուկներ: Հալվեն մշակվում է նաև որպես սենյակային բույս:

46. Կրտսեր եղբայրներ (Fratres minores), այսպես կոչված, միներիտներ՝ 1223 թ ստեղծված ֆրանցիսկյան ուխտ: Այդպես էր կոչվում ի տարբերություն դոմինիկյանների, որոնց ուխտը կազմվել էր ավելի վաղ, 1216 թ.: Ֆրանցիսկյան ուխտը սկզբում դոմինիկյանի համեմատությամբ նշանակալի հաջողությունների հասավ Արևելքի երկրների հետ Արևմտյան Եվրոպայի պետությունների և պապական կուրիայի կապերը զարգացնելու գործում: Այն XIV դ. սկզբին կորցրեց միսիոներական ոլորտում ունեցած իր առաջատար դերը տեղը գիջելով դոմինիկյաններին:

47. Ջովաննի Մոնտեկորվինո (Giovanni de monte Corvino) — կաթոլիկ եկեղեցու նշանավոր գործիչ: 1291 թ. Նիկոլայ IV (1288-1292) պապի առաջադրանքով մեկնել է Չինաստան: 36 տարի շարունակ գտնվել է Պեկինում, որտեղ և վախճանվել է: Մոնտեկորվինո

նոն փորձում էր քրիստոնեությունը բերել մոնղոլ խաներին: Մի շարք հայտնի պատճառներով այդ նրան չհաջողվեց:

48. Լեգատ – Հռոմի պապի լիազորված անձ, գլխավորապես ոչ քրիստոնեական և ոչ կաթոլիկական երկրներում կատարում էր ինչպես հոգևոր ներկայացուցչի, այնպես էլ դեսպանի պարտականություններ:

49. Կլեմենտ (1305-1314) – Արևելքում, մասնավորապես Չինաստանում, Հռոմի եկեղեցու միսիոներական գործունեություն կազմակերպիչներից մեկը: Լինելով ֆրանսիական Ֆիլիպ IV Գեղեցիկի դրածոն, պապական աթոռը Հռոմից փոխադրել էր Պուատյե, ապա՝ Ավինյոն: 1307 թ. Հունիսի 23-ին Պուատյեում նա ստորագրել է կոնդակ՝ “*Rex Regum*” Ջովաննի Մոնտեկորվինոյին «ամբողջ Արևելքի արքեպիսկոպոս և պատրիարք» նշանակելու մասին (*O d o r i c u s R a y n a l d u s. Annales ecclesiastici, ad annum 1307, Roma, 1667, p. 29*):

50. Ջայթոնը՝ Ցյուանչժոուն, VII դ. սկսած Չինաստանի հարավում եղել է կարևոր նավահանգիստ և առևտրական կենտրոն: Ջայթոնով էին արտահանվում համաշխարհային շուկայում վաճառվող անուշահոտությունների, թանկարժեք քարերի, մարգարիտի և այլ ապրանքների մեծ մասը: Հետագայում, ուելդի ծանծաղացման պատճառով, նավահանգիստը կորցրեց իր նշանակությունը: Չինաստանում ֆրանցիսկյան ուելդի միսիոներների հիմնած 6 վանքերից մեկը գտնվում էր Ջայթոնում: Ինչպես պարզվում է Փերուջայի ֆրանցիսկյան վանքի համայնքին 1326-27 թթ. Անդրեյ Փերուջացու ուղղած նամակից, վանքի շենքը կառուցվել է մի հայուհու միջոցներով: Նամակում մասնավորապես ասված է. «Օվկիանոսին մոտ մի մեծ քաղաք կա, որը պարսկերեն լեզվով կոչվում է Ջայթոն, իսկ այդ քաղաքում մի հայ տիրուհի կառուցել է մեծ եկեղեցի, որը իր իսկ արքեպիսկոպոսի (Ջովաննի Մոնտեկորվինոյի – Հ. Մ.) ցուցումով վերածվել է մայր տաճարի» (*L. W a d d i n g. Annales Minorum. T. VII, Quaracchi, 1932. p. 61*):

51. Անդրեյ Փարիզեցի – մինչև վերջերս պատմագիտական գրականության մեջ չճշգրտված անձնավորություն: Որոշ վավերագրերում հիշատակվում է ոմն «Ֆրանկ» Անդրեյ, որին Գ. Յուլը նույնացնում է Անդրեյ Փերուջացու հետ: Յա. Սվետը, վիճարկելով Գ. Յուլի պնդումը և ի հաստատումն իր տեսակետի, բերում է հետևյալ տվյալները. XX դ. 30-ական թվականներին Ցյուանչժոունում եղել է Անդրեյ Փերուջացու անունով գերեզման, որի տապանազորում նշվում էր այս կաթոլիկ միսիոների մահվան տարեթիվը՝ 1332 թ.: Ելնելով գրանից, հիմքեր կան Անդրեյ «Ֆրանկին» նույնացնել Անդրեյ (Անդրեյ) Փարիզեցու հետ: Անդրեյ Փարիզեցի «Ֆրանկը» 1336 թ. գլխավորել է մեծ խանի դեսպանությունը պապի մոտ: Պատվիրակները 1337 թ. մայիսի 31-ին հասան Ավինյոն, և Բենեդիկտ 12-րդ (1334–1342) պապը ընդունեց նրանց: Մեծ խանի ցանկության համաձայն, պապը Խանբալըբ առաքեց միսիա ֆրանցիսկյան վանական Ջովաննի Մարինյոլիի գլխավորությամբ:

52. Պյետրո Ֆլորենտացի – ամենայն հավանականությամբ եղել է այն միսիոներներից մեկը, որոնց XIV դ. հավանաբար 20-ական թվականներին Հռոմի պապերը առաքել են Մոնղոլական կայսրություն:

Հնարավոր է նաև, որ Պյետրո Ֆլորենտացին եղել է Ջայթոնի իտալական (հիմնականում ճենովական) գաղութի անդամներից մեկը: Հայտնի է, որ իտալացի վաճառականները Ջայթոնում են հիմնավորվել այդտեղ եպիսկոպոսության ստեղծումից անմիջապես հետո (*Я. С в е т. После Марко Поло, с. 85*):

53. Նեստորականներ – քրիստոնեության նեստորական հոսանքի հետևորդներ: Հոսանքը սկզբնավորել է պատրիարք (428-431) Նեստորը (մահացել է 450 թ.): Տարածում է ստացել Արևելահռոմեական կայսրության ծայրամասային շրջաններում, հատկապես Սիրիայում: 499 թ. դարձել է ինքնուրույն եկեղեցի: Ի տարբերություն ժամանակին Բյուզանդիայում տիրապետող Հունական եկեղեցու ուսմունքի, նեստորականները Քրիստոսի «աստվածային» էությունը զատում են նրա մարդկային էությունից:

Նեստորականները Ձինաստանում հաստատվեցին VI դ. հետո: Տան հարստության տիրապետության տարիներին այդտեղ, մասնավորապես Չանյանում և Լոյանում, ինչպես նաև երկրի հարավ-արևելյան տարածքներում նրանք արգեն ունեին իրենց եկեղեցիները: Հայտնի է 781 թ. նեստորական նշանավոր մի հուշարձան-արձանագրություն չինարեն և ասորերեն լեզուներով: Այն հայտնաբերվել է XIII դ. Սիան (նախկին Չանյան) քաղաքում:

54. Այդ մասին տեղեկացրել է նաև Ջովաննի Մոնտեկորվինոն: Ղրիմում Ֆրանցիսկյան ուխտի գլխավոր տեղապահին ուղղված նամակում 1305 թ. հունվարի 8-ին նա մասնավորապես գրում էր. «Նեստորականությունը ինչ-որ հանրակցություն է, որ պնդում է, թե քրիստոնյա անուն է կրում, սակայն խիստ ուժեղ տարբերվում է քրիստոնեական ուսմունքից: Այս երկրամասում (Չինաստանում – Ղ. Մ.) նրանք այնքան են ուժեղացել, որ այլ դավանության քրիստոնյաներին չեն ուզում թույլ տալ իրենց եկեղեցին ունենալ կամ իրենցից այլ կարծիք պաշտպանել» (A. Yu. I. e. Cathay and the Way thither. Vol. II, p. 197):

55. Ջովաննի Մոնտեկորվինոյի մահվան տարեթիվը ճշգրտված չէ:

56. Մասունքներ – սրբերի ոսկրերը և իրերը: Ինչպես և այլ ժողովուրդների մեջ, այնպես էլ Ձինաստանում ընդունված էր մասունքներին խոնարհվելը: Մասունքները, սովորաբար ի տես բոլորի, գրվում էին եկեղեցիներում և տաճարներում:

57. Ցույց է տրվում, որ նեստորականությունը հունաց (բյուզանդական) եկեղեցուն հարող ուղղություն է: Ինչպես Հայտնի է, Հռոմեական կայսրության բաժանումից հետո քրիստոնեական եկեղեցին կազմակերպորեն կիսվեց Հռոմեականի և հունականի: 1054 թ. և, հատկապես, 1204 թ. հետո, երբ խաչակիրները դրավեցին Կոստանդնուպոլիսը, Հռոմեական եկեղեցին սկսեց կաթոլիկական կոչվել, իսկ բյուզանդականը՝ ուղղափառ:

58. Աբբայություն – կաթոլիկ վանք՝ իր տիրույթներով Հանդերձ:

59. Ձինաստանում նեստորականների թվի մասին ավելի վաղ որոշակի տվյալներ չեն բերվել: Հայտնի է, որ այդտեղ նրանք ընդամենը մի քանի հազար են եղել:

60. Մոնղոլ խաները հանդուրժողականություն էին դրսևորում բոլոր կրոնների հանդեպ: Դա պետք է բացատրել այդ ժամանակ նրանց դավանած շամանականության ազդեցությամբ, որը քարոզում էր ոգիների հավատ: Մոնղոլները այդ պատճառով բոլոր կրոնների սպասավորներին դերբնական ուժ էին վերադրում և ձգտում էին այդ ուժը ի նպաստ իրենց տրամադրել, օգտագործել ի շահ իրենց: Մոնղոլիայում և Ձինաստանում քրիստոնեական տարածմանը խոչընդոտում էին մի քանի դործոններ՝ այդ երկրների քրիստոնյա աշխարհից հեռու գտնվելը, նրանց միջև դադարափարների փոխանակման հնարավորության սահմանափակությունը: Ինչպես նշում է Յա. Սվետը, «Մեծ խանը (Թոթալմուլթը – Ղ. Մ.) քիչ էր շահագրգռված բոլոր քրիստոնյաների տիրոջ» բարեկամությամբ, որի նստավայրը ինչ-որ տեղ, «յոթ ծովերից անդին էր» (Я. С в е т. Указ. соч., с. 123):